ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում տեղի է ունեցել 301 թվականին: Դա հայ ժողովրդի պատմության մեջ մի դարակազմիկ իրադարձություն էր: Տրդատ Գ Մեծ Արշակունին (287-330) աշխարհում առաջինը ճանաչեց քրիստոնեությունը՝ որպես պետական, պաշտոնական կրոն: Քրիստոնեության ընդունումը Հայաստանում օգնեց, որպեսզի զարգանա նաև տնտեսությունը

Սուրբ Բարդուղիմեոս առաքյալը Գողթն գավառում տեղի իշխանի և իշխանուհու խնդրանքով հիմնադրել է եկեղեցի, իսկ Սուրբ Թադեոս առաքյալը եպիսկոպոսական աթոռ է հիմնել Արտազում:
Հայոց եկեղեցին սովորաբար վարդապետական անվան կիրառում չի ունեցել. այն կոչվել է Հայաստանյայց (կամ՝ Հայաստանի), Հայոց կամ Հայ անունով, իսկ սուրբ, առաքելական, ուղղափառ կամ այլ կոչումները գործածվում են որպես պատվանուն: «Առաքելական» անունով այն տարբերվում է Միջին
Արևելքի քրիստոնեական մյուս եկեղեցիներից

Հայոց եկեղեցու առաջին հիմնադիրներն են եղել սուրբ Թադեոս (քարոզչության տարիները՝ 35-43) և սուրբ Բարդուղիմեոս (44-60) առաքյալները, որոնք հատուկ կոչմամբ անվանվում են Հայաստանի Առաջին Լուսավորիչներ



Նրանց գերեզմանները որպես սրբավայրեր հարգվել ու պահպանվել են պատմական Հայաստանի հարավարևելյան կողմերում գտնվող Արտազի (Մակու) և Աղբակի (Բաշկալե) վանքերում: Այսպիսով, հայ եկեղեցին ունի առաքելական ծագում:

Սկզբում քրիստոնեությունը տարածվում էր բացառապես միջերկրածովյան հրեական սփյուռքում, սակայն Պողոս առաքյալի քարոզների շնորհիվ այն հետևորդներ ձեռք բերեց նաև այլ "հեթանոս" ազգերի շրջանում: Մինչև V դարը քրիստոնեության տարածումն ընթանում էր Հռոմեական կայսրության տարածքում և դրա ազդեցության շրջաններում (Մեծ Հայք, Սիրիա, Եթովպիա)), հետո (հիմնականում 1-ին հազարամյակի 2-րդ կեսին) այն տարածվեց գերմանական և սլավոնական ցեղերի շրջանում, ավելի ուշ (XIII-XIV դդ.) նաև մերձբալթյան և սկանդինավյան շրջանում:



Քրիստոնեական հավատի աղբյուրները կապված են հուդայական Հին կտակարանի հետ:

Աստվածաշնչի համաձայն՝ Հիսուս Քրիստոսը թլփատվել է, դաստիարակվել է որպես հրեա, հետևել է Հին կտակարանի պատվիրաններին, այցելել է սինագոգա շաբաթ օրերին

Քրիստոսի աշակերտները և առաջին հետևորդները հրեաներ էին: Քրիստոսի խաչվելուց երեք ու կես տարի անց քրիստոնեությունը սկսվում է տարածվել նաև այլ ժողովուրդների և ցեղերի շրջանում:

Սկզբում քրիստոնեությունը տարածվում էր բացառապես միջերկրածովյան հրեական սփյուռքում, սակայն Պողոս առաքյալի քարոզների շնորհիվ այն հետևորդներ ձեռք բերեց նաև այլ "հեթանոս" ազգերի շրջանում:

Մինչև V դարը քրիստոնեության տարածումն ընթանում էր Հռոմեական կայսրության տարածքում և դրա ազդեցության շրջաններում , հետո այն տարածվեց գերմանական և սլավոնական ցեղերի շրջանում, ավելի ուշ նաև մերձբալթյան և սկանդինավյան շրջանում:

Առաջնորդական աթոռներ կային Սյունիքում, Եդեսիայում, Արտազում:

Կեռասուս
Տրապիզոն
Ամասիա
Նեոկեսարիա
Կոմանա
Կոդոնիա
Սրգիոկաստրոն
Նիկոպոլիս
Սատաղ
Սեբաստոպոլիս
Սեբաստիա
Դաստաբրակ
Մնի
Կամախ
Արիարաթիա
Թմնիս (Տպմիսա)
Մելիտենե
Հորեբերդ
Թոխարք
Էրախանի
Բերդիկ
Կարուց բերդ
Մնի
Կայեան
Գարդման
Գառնի
Դվին
Արտաշատ
Մասիս լ.
Սիս լ.
Ջարեհավան
Նպատ լ.
Մեծ Լիմբ լ.
Սեւանայ լ.
Մծուրք
Նախ Մասիք լ.
Ջարիշատ
Ոռական
Թարոնիկ
Աթախ
Նփոռետ (Նփրկերտ)
Սանդ
Ամիդ
Տիգրանակերտ
Աստասուն
Բաղաղեշ
Սասուն
Սոթքան
Վան
Ամիդ
Ալանիս
Ջալամար
Ջոայլ
Մանազկերտ
Ծաղուկ
Երնջակ
Նախճավան
Բաղաբերդ
Վարդանակերտ
Փայտակարան
Գանձակ
Շահաստան
Մահկերտ
Արբելա
Գերմանիկե
Մարդաստան
Մոկք լ.
Սարդարապատ
Սարդարապատ
Սարդարապատ

III դարի երկրորդ կեսից Հայաստանի համար բարդ քաղաքական և կրոնական իրավիճակ էր ստեղծված: Այդ խառնաշփոթ շրջանում զրադաշտական մոգերը քանդում էին հայոց հեթանոսական պաշտամունքի շինությունները:



Սասանյան Պարսկաստանը ներխուժում է Հայաստան և ավերածություններ կատարում:
Մ. Խորենացին այս ժամանակաշրջանը անվանել է ժամանակ անիշխանության:

Երբ Հայաստանում գահի վրա էր Խոսրով երկրորդը պարսիկները չեն կարողանում հաղթանակ տանել կամ սպանել նրան, այդ իսկ պատճառով պարսից արքան ուղղարկում է Արշակունիներից Անագ անունով իշխանին:
Նա գալիս և ծառայության է անցնում Խոսրով երկրորդի մոտ: Հետագայում որսի ժամանակ սպանում է Խոսրով երկրորդին, բայց մինչ մահանալը հրամայում է ոչնչացնել Անագի ընտանիքը: Սակայն դայակները փրկում են նրա որդի Գրիդորին և տանում մաժակ Կեսարիա: Այստեղ Գրիգորը ստանում է քրիստոնեական կրթություն : Նույն ժամանակ Տրդատին դայակների հետ միասին ուղղարկում են Հռոմ, որտեղ և նա մեծանում և կրթություն է ստանում:



298թ Մծբինի պայմանագրից հետո Տրդատը վերջնականապես հաստատվում է հայող գահին: Գրիգորը ծառայության է անցած լինում արքունիքում :
Մի անգամ, երբ Անահիտ աստվածուհու տաճարին զոհաբերություն է արվում Գրիգորը հրաժարվում է զոհաբերություն մատուցել:Տրդատը իմանալով , որ Գրիգորը Անագի՝ իր հոր սպանողի որդին է, նրան բանտարկում է Խոր Վիրապում:



Դիոկղետիանոս կայսեր հետապնդումների հետևանքով Հռոմից Հայաստան էին փախել **Հռիփսիմեի** և **Գայանեի** գլխավորած քրիստոնյա կույսերը: Հռիփսիմեն մերժում է Տրդատ արքայի սերը և նահատակվում: Դրանից հետո նա հիվանդանում է և նրան բուժում է Գրիգորը:

e-school ARMENIA

Գրիգորը այնտեղ մնում է 13 տարի:
Տրդատի հիվանդանալուց հետո նրա քույրը Խոսրովդուխտը երազ է տեսնում, որ Տրդատին կարող է բուժել միայն Գրիգորը:
Ոչ ոք չէր հավատում, որ Գրիգորը ողջ մնացած կլինի Խոր Վիրապի բանտում:
Տրդատի ծառաները գնում և բերում են Գրիգորին:
Գրիգորը բուժում է Տրդատ արքային և սկսում քարոզչություն կատարել հայոց աշխարհում:

Տրդատ Մեծի հրամանով Գրիգորը կարգվում է քահանայապետ , ապա մեկնում է Մաժակ (Կեսարյա): Մասնակցում է Ղևոնդիոսի գլխավորած ժողովին և նրա կողմից նշանակվում Հայոց աշխարհի գլխավոր եպիսկոպոսապետ կամ կաթողիկոս:

Սբ Գրիգորի կոչով շինվում են Հռիփսիմյան կույսերի վկայարանները։ Քանդվում են հեթանոսական տաճարները և այդ տեղերում քրիստոնեական վկայարանների ու եկեղեցիների հիմքեր են դրվում։

e-school ARMENIA

Գրիգոր Լուսավորիչը վերադառնում է և բոլորին՝ արքունիքին, զորքին, ժողովրդին, առաջնորդում է Արածանիի ափը և մկրտում։ Այսպիսով՝ ***301*** թ. Հայաստանում, աշխարհում առաջինը, քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն։

303 թ. Վաղարշապատում կառուցվում է Մայր տաճար Ս. Էջմիածինը: Հաստատվում է Հայոց առաքելական եկեղեցու նվիրապետությունը:



e-school
ARMENIA

GG